ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. սեպտեմբերի 18-21-ը Մոլդովայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝ Կարեն Ալավերդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Մոլդովայի Հանրապետություն (ք. Քիշնև), 2019թ. սեպտեմբերի 18-21

4. Հրավիրող կողմը՝ Մոլդովայի Հանրապետության ֆինանսների նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի 16-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

- ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի կողմից 2018թ. կատարված աշխատանքներ, անդամ-երկրներում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառման փորձի փոխանակման հարցերի քննարկում, համախմբված ֆինանսական հաշվետվությունների համաձայնագրի դրույթների կիրառմանն ուղղված քայլերի ձեռնարկում, աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության իրականացման առաջարկությունների կիրառում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Հանդիպումներ ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի անդամների հետ
- ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի հերթական նիստում ՀՀ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների առկա իրավիճակի և բարեփոխումների հիմնական ուղղությունների ներկայացում

- ԱՊՀ անդամ պետություններում հաշվապահական հաշվառման համակարգի կատարելագործման, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառման փորձին առնչվող հարցերի քննարկում

8. Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

ԱՊՀ գործադիր կոմիտեին առընթեր հաշվապահական հաշվառման համակարգող խորհրդի 16-րդ նիստի ընթացքում, որպես համակարգող խորհրդի անդամ ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվողականության և աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտներում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները և առաջիկայում նախանշված քայլերը: Ներկայացրել եմ նաև ՀՀ-ում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների թարմացման, նոր ստանդարտների թարգմանության և կիրառման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը:

9. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ Կարեն Ալավերդյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

24.09.2019թ.